ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2021 թվականի թիվ 131-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-Ն որոշման և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 13.2.1 կետի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իմ ղեկավարությամբ Տավուշի մարզում 2021 թվականի մայիսի 26-ին անցկացնել «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ուսումնավարժություն):

2. Նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Վահան Փիրումյանին:

3. Հաստատել՝

1) ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանը՝ համաձայն հավելված 1-ի,

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Ուսումնավարժությանը ընդգրկել՝

1) ՀՀ Տավուշի մարզպետարանին,

2) ՀՀ Տավուշի մարզի արտակարգ իրավիճակների և տարահանման հանձնաժողովներին,

3) Իջևան, Գանձաքար և Գետահովիտ համայնքի ղեկավարներին:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փրկարարական ծառայության գնդապետ Վահան Փիրումյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել ս/թ մայիսի 24-ին:

6. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տարահանման հանձնաժողովի նախագահին՝

1) ստուգել տարահանման հանձնաժողովի ընդունման և տեղաբախշման կետերի պատրաստությունը: Ճշտել տարահանման և տեղաբախշման համար օգտագործվող տրանսպորտի քանակը, տարահանվող բնակչության հաշվարկը՝ ըստ բնակավայրի տեղաբախշման,

2) ճշգրտել «ՀՀ Տավուշի մարզի տարահանման պլան»-ը,

3) ճշգրտել «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Տավուշի մարզի գործողությունների պլան»-ը:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել առնչվող պլաններն ու փաստաթղթերը,

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

8. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

27.04.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ